ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/192-2023
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29 նոյեմբերի 2023 թվական
5 դեկտեմբերի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝
Փոխվարչապետ **Տ. Խաչատրյան**

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ
Խորհրդի անդամներ՝

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ	Ռ. Գևորգյան
«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ	Լ. Օհանեսյան
Ինժեներական ասոցիացիա	Ա. Սալաթյան
«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	Ա. Խաչատրյան
«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	Բ. Ենգիբարյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Հ. Ջաքոյան
«Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ	Հ. Ֆանյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ	Ի. Հարությունյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ	Լ. Մնացականյան
«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային կազմակերպություն	Ն. Մանուկովա
«Փոքր և միջին ձեռնարկության համագործակցության ասոցիացիա» ՀԿ	Վ. Մամբրեյան
«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա	Կ. Ջաքարյան

Խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակիցներ՝

Ազգային ժողովի պատգամավոր	Ն. Բաբայան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ	Ռ. Սարգսյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Լ. Բալյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Հարությունյան
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	Ա. Մուրադյան
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	Ա. Մանուկյան
Կենտրոնական բանկի խորհրդի անդամ	Ա. Մանուկյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական	Լ. Առաքելյան
Պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետ	Ա. Կարապետյան
Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ	Լ. Հարությունյան

Ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ	Ս. Շահնազարյան
Ֆինանսների նախարարության գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի պետ	Գ. Բաղդասարյան
Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժնի պետ	Ա. Արշակյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության պետ	Վ. Ասեյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական վարչության պետ	Ա. Պողոսյան
Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության ներկայացուցիչ	Լ. Սարգսյան

Քարտուղարության անդամներ՝

Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ	Հ. Հովհաննիսյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության փորձագետ	Թ. Սարգսյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի գլխավոր մասնագետ	Փ. Ղազարյան
Էկոնոմիկայի նախարարության վճարահաշվարկային համակարգերի բաժնի գլխավոր մասնագետ	Հ. Միսակյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար	Հ. Պատվականյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու	Հ. Մալխասյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ	Դ. Աղաջանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ	Ռ. Սարուխանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի հանրային կապերի պատասխանատու	Հ. Տոնապետյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող	Վ. Կամարյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Փոխվարչապետի առաջարկությամբ՝ միաձայն հաստատվեց Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հերթական նիստի օրակարգը՝ օրակարգում ընդգրկված հարցերի քննարկումը երկու հաջորդական հանդիպումների միջոցով իրականացնելու պայմանով:

Օրակարգային հարց 1՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տնտեսական ակտիվացմանն ուղղված միջոցառումներ.

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը՝ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տնտեսական ակտիվացմանն ուղղված միջոցառումներին: Ներկայացնելով մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառումը, նշեց, որ նախատեսվում է գործատուների կողմից 12 ամիս շարունակ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու պայմաններում գործատուների համար կիրառել եկամտային հարկի վերադարձելիության սկզբունքը: Կարևորեց նաև բռնի տեղահանվածների կողմից փոքր ձեռնարկությունների ստեղծման համար անհրաժեշտ նախապայմանների ապահովումը՝ հնարավորություն տալով համապատասխան գիտելիքներ ստանալու և խորհրդատուների աջակցությամբ բիզնես ծրագիր մշակելու պայմաններում պետության կողմից ստանալ որոշակի ֆինանսական աջակցություն:

2. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.**

1) ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանն առաջարկեց անդրադառնալ բանկերում դասակարգված՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար ֆինանսների հասանելիության ապահովման խնդիրներին:
2) «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանն առաջարկեց դիտարկել մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառման համանմանությամբ այլ ոլորտներում ևս եկամտային հարկի վերադարձելիություն նախատեսելու հնարավորությունը:
3) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հրաչյա Ջաքոյանը տեղեկացրեց, որ համալսարանը մարզպետարանների աշխատակազմեր է ներկայացրել ձեռներեցությամբ զբաղվելու համար անհրաժեշտ կիրառական հմտությունների 17 կարճաժամկետ դասընթացների նկարագրություն՝ ԼՂ-ից բռնի տեղահանված մինչև 29 տարեկան մարզաբնակ երիտասարդների շրջանում տարածելու համար:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ շարունակել ներկայացված առաջարկների և ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց տնտեսական ակտիվացմանն ուղղված հնարավոր միջոցառումների շուրջ քննարկումները՝ արդյունքների, այդ թվում՝ ձևավորված կոնկրետ ծրագրային առաջարկների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելով փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ:

Օրակարգային հարց 2՝ Կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված որոշ տեխնիկական պահանջների վերանայում («ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն և 2001 թվականի հունվարի 16-ի N 24 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ).

1. Զեկույց ներկայացրեց՝

1) «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն ղեկավար Սարգիս Կարապետյանը՝ նշելով, որ վերջին տարիներին տնտեսավարողների հիմնական խնդիրներից է դարձել որակյալ մասնագետների պակասը՝ ինչպես բարձրագույն, այնպես էլ նախնական և միջին մասնագիտական կրթությամբ: Ավելացրեց, որ տնտեսավարողներն առավել հաճախ են սկսել սեփական միջոցներով կրթել իրենց ապագա կադրերին կամ պատվիրակում են այդ գործառույթը ոչ ֆորմալ կրթության կազմակերպություններին: Այս համատեքստում անդրադարձավ որոշ օրենսդրական կարգավորումների, որոնք թույլ չեն տալիս որակյալ ոչ ֆորմալ կրթական հաստատություններին լիցենզավորվել և գործել որպես ֆորմալ կրթական հաստատություններ:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) ՎՋԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանն առաջարկեց վերանայել նախնական մասնագիտական և միջին մասնագիտական, ինչպես նաև մագիստրոսական ծրագիր իրականացնող կրթական հաստատությունների լիցենզավորման համար անհրաժեշտ պահանջը, ըստ որի՝ դասախոսական կազմի և արտադրական ուսուցման վարպետների 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր: Առաջարկեց նաև օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ոչ պետական ուսումնական հաստատությունների համար վերացնել դասախոսների՝ պարբերաբար ատեստավորման և օտար լեզվի իմացության հավաստման պահանջները, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունների համար՝ ուսումնական տարածքների՝ Կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխանելու որոշ պահանջներ:

2) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը նշեց, որ լիցենզավորման կարգում առաջարկվող փոփոխությունների իրականացմամբ հնարավոր կլինի բարձրացնել կրթական հաստատությունների միջև մրցակցությունը:
3) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության պետ Աշոտ Արշակյանը, մատնանշելով «Լիցենզավորման մասին» օրենքը, անընդունելի համարեց պետական և մասնավոր կրթական հաստատությունների միջև տարբեր չափանիշների սահմանումը: Միաժամանակ նշեց, որ ուսումնական տարածքների համար սահմանված որոշ նորմատիվներ (օրինակ՝ հանրակրթության պարագայում լաբորատորիաներ և մարզադահլիճներ ունենալը) բխում են տվյալ կրթական ծրագրերի առանձնահատկություններից:
4) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական վարչության պետ Արմենուհի Պողոսյանը կարևորեց ֆորմալ կրթական ծրագիրը ոչ ֆորմալ կրթական ծրագրից տարբերակելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ ֆորմալ կրթության արդյունքում շնորհվում է որակավորում, իսկ ոչ ֆորմալ կրթության արդյունքում որակավորում շնորհելու պահանջ օրենքով սահմանված չէ: Ավելացրեց, որ կրթության գործընթացը ներառում է նաև դաստիարակության և անձի ձևավորման գործառույթ՝ նկատելով, որ տարբեր կառույցների կողմից առանց որևէ լիցենզավորման պահանջի այժմ ևս իրականացվում են հմտությունների ձևավորմանն ուղղված կարճաժամկետ ծրագրեր:
5) Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի միջազգայնացման և բարեփոխումների գծով պրոռեկտոր Սարգիս Ասատրյանցը առաջարկեց փորձնական կրթական ծրագրերի ներդրումը նախ և առաջ դիտարկել միջին մասնագիտական կրթական հաստատություններում՝ հնարավորություն տալով կրթական ծրագրերը մատուցել նոր ձևաչափերով:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ երկշաբաթյա ժամկետում ՓՄՁ զարգացման խորհրդի անդամների և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ առանձնացնել նկարագրվող փոփոխությունների ապահովման համար անհրաժեշտ և սկզբունքորեն ընդունելի նվազագույն հարցերի շրջանակ՝ դրանց շուրջ շահագրգիռ մարմինների մասնակցությամբ առարկայական քննարկում հրավիրելու նպատակով:

Օրակարգային հարց 3՝ Փորձաքննության արդյունքների համաձայն երկակի նշանակության ապրանքներ չհանդիսացող ապրանքների արտահանման և ռազմական նշանակության ապրանք չհանդիսացող ապրանքների ներմուծման ժամանակ կրկնակի փորձաքննության անհրաժեշտությունը բացառելուն ուղղված կարգավորումների ներդրում («Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ

փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին օրենքում լրացում կատարելու մասին» և ««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր).

1. **Զեկույց ներկայացրեց՝**

2) Ինժեներական ասոցիացիայի խորհրդի նախագահ Արամ Սալաթյանը՝ նշելով, որ ՀՀ տարածք ռազմական նշանակության ապրանքների ներմուծումը, ինչպես նաև ՀՀ տարածքից երկակի նշանակության ապրանքների արտահանումն ու տարանցիկ փոխադրումը ենթադրում են համապատասխանաբար լիցենզիայի և թույլտվության ստացում, որի նպատակով իրականացվում է փորձաքննություն: Հայտնեց, որ Պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակվում է ռազմական կամ երկակի նշանակության չհամարվող ապրանքների ցանկը, որը նպաստում է ապրանքների վերաբերյալ մաքսային ձևակերպումների հետ կապված վարչական և ֆինանսական բեռի կրճատմանը: Առաջարկեց ցանկում ներառված ապրանքների մասով չիրականացնել փորձաքննություն՝ հիմք ընդունելով նախորդ փորձաքննությունների արդյունքները:

2. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.**

1) Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը նշեց, որ հրապարակվող ցանկերը կողմնորոշիչ բնույթի են և չեն բացառում փորձաքննության անհրաժեշտությունը:
2) Պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետ Արտեմ Կարապետյանը նշեց, որ չնայած նրան, որ համապատասխան տեղեկատվությունը աշխատանքային կարգով հավաքագրվում է Կոմիտեում, ապրանքի անվանումը բավարար չէ այն երկակի կամ ոչ երկակի որակելու համար: Միաժամանակ առաջարկեց հայտատուների կողմից հայտը լրացնելու դեպքում այն միանգամից ուղղել մաքսային մարմին:
3) «Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանն առաջարկեց կազմակերպությունների համար սահմանել ներմուծման և արտահանման տարեկան հայտարարագրված ապրանքների ցանկ:

3. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**

1) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ Պետական եկամուտների կոմիտեի և շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ երկշաբաթյա ժամկետում աշխատանքային կարգով քննարկել ներկայացված մտահոգությունները՝ ձևակերպելով տնտեսավարողների ժամանակը և միջոցները կրճատելուն ուղղված փոխհամաձայնեցված լուծումներ:

Օրակարգային հարց 4՝ Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում («ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ).

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Հայկազ Ֆանյանը՝ նշելով, որ ՓՄՁ սուբյեկտները ազատ ֆինանսական միջոցներ չունենալու պայմաններում չեն կարողանում մասնակցել առավել մեծ արժեքով գործարքների, առաջարկեց ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիությունը բարձրացնելու նպատակով որպես գործիք ծառայեցնել ֆակտորինգը: Հայտնեց, որ խոսքը գնում է ֆակտորինգի մասին օրենքով պահանջվող ծանուցումը ներկայացնելու ժամկետի և հասցեատիրոջ, ինչպես նաև նման ծանուցման հիման վրա վճարումն անմիջապես ֆինանսական գործակալին կատարելու համար անհրաժեշտ կարգավորումների մասին:

2. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.**

1) ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանն առաջարկեց գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման պարագայում ֆինանսական գործակալին պարտավորեցնել պատվիրատուին և Ֆինանսների նախարարությանը ֆակտորինգի պայմանագրի կնքման պահից գրավոր ծանուցել և սահմանել վճարման ընթացակարգ:

3. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**

1) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ քննարկման արդյունքներով երկշաբաթյա ժամկետում վերջնականացնել «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ Կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ